Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝	ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Թեմա՝	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը մայրենիի դասավանդման մեջ
Վերապատրաստող, մենթոր՝	Նարինե Բաղդասարյան
Ուսուցիչ՝	Մարիամ Սարիբեկյան-Հակոբյան

Վանաձոր 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1.

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Նորագույն տեխնոլոգիաներ, դրանց կիրառման անհրաժեշտությունը 6

1.2. Ինտերակտիվ մեթոդներ, դերը, նկարագրությունը 8

1.3. BookCreator.com և SmartNotebook ծրագրային հարթակներ 10

ԳԼՈՒԽ 2.

ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 4-ՐԴ Բ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

1.1. Գաղափար, որը հիմք հանդիսացավ էլեկտրոնային գրքեր ստեղծելուն 13

1.2. Ծրագրային հավելվածի կիրառման նպատակը և ակնկալվող արդյունքները մայրենիի դասերին 13

1.3. Ծրագրի իրականացման պլան, քայլաշար 14

1.4. Սովորողների կողմից ստեղծված հեղինակային էլեկտրոնային գրքերի՝ լավագույն նմուշօրինակների ներկայացում 16

1.5. SmartNotebook ծրագրային հարթակի կիրառումը մայրենիի դասերին 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XXI-րդ դարում մտածողության համընդհանրացման, բազմակողմանի ինֆորմատիզացիայի պայմաններում մեծանում են պահանջները նաև կրթության ոլորտի նկատմամբ, որը պետք է պատրաստի կյանքին հաստատուն քայլերով ընդառաջ գնացող սովորող: Սա է պատճառը, որ կրթության ոլորտը ենթարկվում է փոփոխությունների: Կրթության ոլորտում նորարարությունների ներմուծումը միշտ պայմանավորված է գործնական պահանջներով: «Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից, երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը» /Բ. Ֆ. Սքիներ/:

Այսօր ուսումնական հաստատությունում ուսուցման ռազմավարությունը փոխարինվում է զարգացման ռազմավարությամբ: Անհրաժեշտ է ձգտել ուսուցչակենտրոն ուսուցումից անցում կատարել աշակերտակենտրոն ուսուցմանը: Ուսուցիչը պետք է շարժառիթ ստեղծի, հետաքրքրություն առաջացնի: Իսկ դրա համար ուսուցման պրոցեսը պետք է մոտիվացնող և հետաքրքիր լինի: Նման դասընթացը պահանջում է ավելի մեծ պատրաստվածություն: Բավարար չէ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը կիրառի նորագույն տեխնոլոգիաներ, ինտերակտիվ մեթոդներ, որոնց շնորհիվ սովորողը կամա թե ակամա կդառնա դասապրոցեսի մասնակից:

Հետազոտությունները ցույց են տվել, որ [1]

երբ դուք ինչ-որ բան կարդում եք, հիշում եք 10%-ը,

երբ դուք ինչ-որ բան լսում եք, հիշում եք 20%-ը,

երբ դուք ինչ-որ բան տեսնում եք, հիշում եք 30%-ը,

երբ դուք ինչ-որ բան տեսնում և լսում եք, հիշում եք 50%-ը,

երբ դուք ինչ-որ բան ինքնուրույն եք անում, հիշում եք 90%-ը:

Նոր կրթական ռազմավարությունը բերել է նորագույն տեխնոլոգիաների, նոր մոտեցումների, ինտերակտիվ մեթոդների կիրառմանը: Տեխնոլոգիաների ոլորտում զգալի առաջընթացը, որը կարող է հեղափոխել մեր ուսուցման և սովորելու ձևը՝ էլեկտրոնային գրքերը և սմարթ դասերն են:

Էլեկտրոնային գրքերն ավելի ու ավելի տարածված են դառնում իրենց հարմարության և մատչելիության շնորհիվ: Էլեկտրոնային գրքերն առաջարկում են մի շարք առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ ընդգծելու և նշումներ անելու, կոնկրետ հիմնաբառեր որոնելու և տառատեսակի չափն ու ոճը կարգավորելու հնարավորությունը: Սա սովորողների համար ընթերցանությունը և ուսումնասիրությունն ավելի անհատականացված և ինտերակտիվ է դարձնում:

Սմարթ դասերը ևս նորագույն տեխնոլոգիա են, որոնք վերափոխել են ուսուցման գործընթացը: Այս դասերը ուսուցիչներին հնարավորություն են տալիս ավելի գրավիչ և դինամիկ դասեր մատուցել: Սմարթ դասերը նաև ուսուցիչներին հնարավորություն են տալիս հեշտությամբ ներառել մուլտիմեդիա բովանդակություն, ինչպիսիք են տեսանյութերը, անիմացիաները և ինտերակտիվ սիմուլյացիաները, որոնք կարող են օգնել սովորողներին ավելի հեշտությամբ հասկանալ բարդ հասկացությունները:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ շուրջն ամեն ինչ փոխվում է անվերահսկելի արագությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաները կարճ ժամանակահատվածում ներդրվեցին մարդու գործունեության գրեթե բոլոր բնագավառներում: Կրթական բարեփոխումների իրականացումը, որոնք սահմանում են կրթական նոր առաջնահերթություններ և պահանջներ, նույնպես պահանջում են մանկավարժության մեջ կիրառվող դասավանդման տեխնոլոգիաները հարմարեցնել ժամանակին և իրավիճակին, ցուցաբերել ուսուցման տեխնոլոգիաների և մեթոդների ընտրության ճկունություն: Վերոնշյալով է պայմանավորված նորագույն տեխնոլոգիաների կիրառման խնդրի հետազոտության **արդիականությունը:**

Այս հետազոտական աշխատանքի **նպատակն է** հետազոտել նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման արդյունավետությունը մայրենիի դասավանդման մեջ:

Դրված նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները՝**

- Ուսումնասիրել «Նորագույն տեխնոլոգիա» և «Ինտերակտիվ մեթոդ» հասկացությունները:
- Ներկայացնել bookcreator.com հավելվածը, SMART Notebook ծրագիրը:
- Ուսումնասիրել Վանաձորի թիվ 8 հիմնական դպրոցի 4-րդ Բ դասարանում կիրառված էլեկտրոնային գրքերի ստեղծման փորձը, գնահատել դրանց արդյունավետությունը:

ԳԼՈՒԽ 1. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1. Նորագույն տեխնոլոգիաներ, դրանց կիրառման անհրաժեշտությունը

Տեխնոլոգիան հունարեն բառ է, որ նշանակում է գիտություն արվեստի և վարպետության մասին (techne - արվեստ, վարպետություն և logos – գիտություն, ուսմունք): Այն ուսուցման և դաստիարակության ոլորտում կիրառվող աշխատանքի ձևերի ամբողջությունն է, որը մանկավարժության մեջ ներմուծվել է 20-րդ դարի 60-ական թվականներին: Այն մի դեպքում հասկացվում է որպես տեխնիկական միջոցների ամբողջություն և դրա կիրառումը (Գ. Սելեվկո), երկրորդ դեպքում՝ որպես միկրոհամակարգ, որի բաղկացուցիչ մասն են կազմում գիտական հիմնավորված ու խմբավորված տարրեր՝ մանկավարժական խնդիր, դրան համապատասխանող միջոցներ ու մեթոդներ, հնարներ (Բ. Լիխաչով), մեկ այլ դեպքում՝ծրագիր, որի իրականացումը ենթադրում է կանխատեսվող արդյունք (Գ. Քսենզովա, Ա. Կոլեչենկո)[2]:

Ժամանակակից մանկավարժական գործընթացի կազմակերպմանն առաջադրվող նոր խնդիրների լուծման նպատակով տարբեր որոնողական աշխատանքներ են իրականացվում, որոնք ուղղված են նոր մեթոդների, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման արդյունավետ ձևերի և տարբեր միջոցների ուսումնասիրությանը, փորձարկմանը և տարածմանը: Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված չէ առանձին հնարներով, մեթոդներով, այլ միայն դրանց համալիր կիրառման համակարգով՝ մանկավարժական տեխնոլոգիաներով: Ողջ մանկավարժական գործընթացը նպատակաուղղված է տարաբնույթ խնդիրների լուծմանը, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է խնդրին համապատասխան նպատակային տեխնոլոգիաների մշակում, կիրառում:

Ժամանակակից կրթության նպատակները փոքր-ինչ փոփոխվել են: Կրթական բարձր մակարդակ ապահովելու և ժամանակակից պահանջները կատարելու նպատակով անհրաժեշտ է կիրառվեն տարբեր նորարական տեխնոլոգիաներ:

Դրա համար ուսուցիչը պետք է վարժ տիրապետի բոլոր տեխնոլոգիաներին, կարողանա ժամանակին կատարել ճիշտ ընտրություն, որը կախված կլինի բազմաթիվ գործոններից՝

- ➔ սովորողների տարիքից,
- ➔ թեմայի արդիականությունից և հրատապությունից,
- ➔ սովորողների ընդգրկվածության աստիճանից,
- ➔ սովորողների ինտելեկտուալ մակարդակից…

Ներկայումս կրթական գործընթացում վերարտադրողական գործունեության (հիշողության մեջ մնացածի վերարտադրման) մասնաբաժնի նվազեցման միջոցով երեխայի անհատական զարգացումն ապահովող ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառումը կարող է համարվել որպես կրթության որակի բարձրացման հիմնական պայման՝ նվազեցնելով աշակերտների ծանրաբեռնվածությունը և մոտիվացիա հանդիսանալով:

Ժամանակակից կրթական տեխնոլոգիաները ներառում են.

- ❖ զարգացման ուսուցում
- ❖ պրոբլեմային ուսուցում
- ❖ բազմաստիճան ուսուցում
- ❖ կոլեկտիվ վերապատրաստման համակարգ
- ❖ գյուտարարական խնդիրների ուսումնասիրման տեխնոլոգիա (TRIZ)
- ❖ ուսուցման մեջ հետազոտական մեթոդներ
- ❖ նախագծային ուսուցման մեթոդներ
- ❖ դասավանդման մեջ խաղի մեթոդների կիրառման տեխնոլոգիա՝ դերային խաղեր, բիզնես և այլ տեսակի կրթական խաղեր
- ❖ ուսուցում համագործակցության մեջ (թիմային, խմբային աշխատանք)
- ❖ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ և այլն[3]:

1.2. Ինտերակտիվ մեթոդներ, դերը, նկարագրությունը

Ինտերակտիվ կամ փոխներգործուն /inter-փոխադարձ, act-ազդել, ներգործել/ նշանակում է փոխազդել, զրուցել կամ երկխոսել:

Ինտերակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է՝

- սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ,
- ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար,
- սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները:

Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները՝ խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են [4].

- ➢ փոխազդեցությունը,
- ➢ փոխուսուցումը,
- ➢ սովորողի ակտիվությունը,
- ➢ համագործակցությունը,
- ➢ ինքնարտահայտման խրախուսումը,
- ➢ հետադարձ կապը:

Փոխներգործուն մեթոդների դերը՝

- ➔ մտածողության զարգացում,
- ➔ առաջնային գիտելիքի ձեռքբերում,

- ➔ հաղորդակցական միջավայրի ստեղծում,
- ➔ ճանաչողական ակտիվության խթանում,
- ➔ ուսուցանողի և սովորողների ընդգրկուն փոխազդեցություն,
- ➔ հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորում

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներն են՝[5]

- Խճանկար
- Պրիզմա
- Բանավեճ
- Մտագրոհ
- Վենի դիագրամ
- Գուս /գիտեմ,ուզում եմ սովորել, սովորել եմ/
- Գործնական և դերային խաղեր
- Նախագծային մեթոդ
- T – աձև աղյուսակ
- Գաղափարների քարտեզագրում
- Մտածի՞ր զուգորդի՞ր, մտքեր փոխանակի՛ր
- Խմբավորում
- Փոխներգործուն նշանների համակարգ
- Աշխատանք փոքր խմբերով

Այս շարքից կանդրադառնանք բանավեճին և նախագծային մեթոդին:

ԲԱՆԱՎԵՃ

Բանավեճը կոնկրետ հիմնահարցերի վերաբերյալ հայացքների, կարծիքների փոխանակման, քննարկման ձևով ուսուցման ակտիվ մեթոդ է:

Մեթոդը կիրառվում է, երբ նպատակ է դրվում՝

♦ ձևավորել նոր գիտելիքներ,

♦ ձևավորել հաղորդակցական հմտություններ,

♦ սովորողների մոտ ապահովել այս կամ այն հարցերի մասին խորհելու, դրանց էության մեջ ներթափանցելու մոտիվացիան,

♦ սովորողներին օգնել սեփական կարծիքը ամրապնդելու և պահպանելու հարցում:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴ



Մեթոդի նպատակն է՝

- սովորեցնել սովորել,
- ուղղորդել իմացական գործընթացը,
- խթանել հետազոտական աշխատանքը,
- զարգացնել ստեղծագործական միտքը,
- ինֆորմացիան վերլուծելու կարողության զարգացում,
- ինտելեկտուալ գործունեության սեփական փորձի ձեռք բերում:

1.3. BookCreator.com և SmartNotebook ծրագրային հարթակներ

Կան բազմաթիվ եղանակներ, որոնցով կարելի է կիրառել նորագույն տեխնոլոգիաները ուսուցման մեջ՝ ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու, սովորողների մոտ մոտիվացիա առաջացնելու համար:

Ընդլայնված և վիրտուալ իրականության տեխնոլոգիաները կարող են օգտագործվել ուսուցման խորը փորձառություններ ստեղծելու համար, որոնք թույլ են տալիս սովորողներին շփվել և ուսումնասիրել բարդ հասկացություններն ու միջավայրերն այնպես, որ նախկինում հնարավոր չէր: Այդպիսի մի ծրագրային հարթակ է **Book Creator**-ը, որը թույլ է տալիս օգտվողներին ստեղծել և հրապարակել թվային գրքեր, ներառյալ էլեկտրոնային գրքեր, աուդիոգրքեր և ինտերակտիվ գրքեր: Ծրագիրը նախատեսված է մանկավարժների, սովորողների և անհատների կողմից օգտագործելու համար և առաջարկում է մի շարք գործիքներ և

առանձնահատկություններ՝ պրոֆեսիոնալ տեսք ունեցող թվային գրքեր ստեղծելու համար:

Book Creator-ի որոշ հիմնական հատկանիշները ներառում են.

- ❖ Հարմարեցված ձևանմուշներ և դասավորություններ տարբեր տեսակի գրքեր ստեղծելու համար, ինչպիսիք են՝ գեղարվեստական, ոչ գեղարվեստական և ուսումնական նյութեր:
- ❖ Մի շարք մուլտիմեդիա գործիքներ, ներառյալ՝ գրքին պատկերներ, տեսանյութեր և աուդիո ձայնագրություններ ավելացնելու հնարավորություն:
- ❖ Համագործակցության գործիքներ, որոնք թույլ են տալիս մի քանի օգտատերերի աշխատել նույն գրքի վրա միաժամանակ և իրական ժամանակում:
- ❖ Գրքեր հրապարակելու հնարավորություն մի շարք հարթակներում՝ ներառյալ iBooks-ը, Google Play Books-ը և Kindle-ը:
- ❖ Մատչելիության գործառույթներ, ինչպիսիք են՝ տեսողական խնդիրներ ունեցող օգտատերերի համար պատկերներին այլընտրանքային տեքստ ավելացնելու հնարավորությունը:

Ընդհանուր առմամբ, SmartNotebook-ը ևս բազմակողմանի և հզոր գործիք է, որը մանկավարժներին և սովորողներին հնարավորություն է տալիս ստեղծել գրավիչ և ինտերակտիվ բովանդակություն, որը կարելի է հեշտությամբ համօգտագործել և հասանելի դարձնել բազմաթիվ հարթակներում և սարքերում:

SmartNotebook-ը լայնորեն օգտագործվում է մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանում, համալսարաններում և բիզնեսներում ողջ աշխարհում: Այն հասանելի է Windows, Mac և Linux օպերացիոն համակարգերի համար և համատեղելի է մի շարք ապարատային սարքերի, այդ թվում՝ Smart ինտերակտիվ էկրանների, պրոյեկտորների և ինտերակտիվ գրատախտակների հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ էլեկտրոնային գրքերը և սմարթ դասերը կարող են բարելավել ուսանողների ներգրավվածությունը, մոտիվացիան և

թույլ են տալիս օգտատերերին ստեղծել և պահպանել դասի պլաններ, ներկայացումներ և գործողություններ, որոնք կարող են հեշտությամբ կիսվել ուրիշների հետ տարբեր ձևաչափերով՝ դարձնելով ուսուցումն ավելի անհատականացված և արդյունավետ:

Դասավանդման մեջ նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը, ինչպիսիք են՝ էլեկտրոնային գրքերը և սմարթ դասերը, խիստ արդիական խնդիր է, որը, հավանաբար, կշարունակի մնալ կրթության հիմնական կենտրոնը գալիք տարիներին:

ԳԼՈՒԽ 2. ՎԱՆԱՁՈՐԻ ԹԻՎ 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 4-ՐԴ Բ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

1.1. Գաղափար, որը հիմք հանդիսացավ էլեկտրոնային գրքեր ստեղծելուն

Մեր օրերում գիտելիքով չես զարմացնի և՛ ոչ մի սովորողի: Անհրաժեշտ է, որ աշակերտներն ունենան մոտիվացիա, ինքնուրույն աշխատելու սեր և պատասխանատվություն:

4-րդ Բ դասարանի աշակերտներն ինքնուրույն նախաձեռնությամբ դասարանում ստեղծել էին ինքնաշեն գրադարան: Բերել էին տարբեր հետաքրքիր գրքեր և առանձնացրել՝ ըստ բաժինների: Սովորողներից ամենաակտիվը դարձել էր գրադարանավարուհի և գրագետ ու պատշաճ մակարդակով կատարում էր իր աշխատանքը:

Կարծես ամեն ինչ նպատակային էր արվում և արդարացնում էր ակնկալիքները. սովորողները հաճախակի օգտվում էին գրադարանից, կարդում և նշված ժամանակահատվածում հետ վերադարձնում գրքերը: Գրադարանավարուհին, անգամ, հարցերի միջոցով վերահսկում էր՝ արդյո՞ք իսկապես ընթերցվել էր գիրքը, թե՞ ոչ:

Մի քանի ամիս, այս աշխատանքով ոգևորված, սովորողներն ակտիվ օգտվում էին գրադարանից: Սակայն ամեն սկիզբ ունի նաև իր վերջը. շուտով նվազեց սովորողների հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, այլևս չկար այն ոգևորությունը, որն սկզբում էր:

Սովորողներից մեկը հարց ուղղեց՝ նշելով, որ իրենք ապրում են 21-րդ դարում, որտեղ ամեն ինչ թվայնացված է, յուրաքանչյուր բնագավառ՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած. մի՞թե հնարավոր չէ ընթերցանությունն առավել արդիական և ժամանակակից դարձնել: Այս հարցադրումն էլ դարձավ այն ազդակը, այն սկիզբը, որով մայրենին, ընթերցանությունն առավել գրավիչ և հետաքրքիր դարձնելու համար, անհրաժեշտ էր նոր մոտեցում՝ հագեցած նորագույն և ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով: Բայց ՏՀՏ գործիքների բազմազանության մեջ անհրաժեշտ էր ընտրել այնպիսի գործիք, որը կլիներ

- հետաքրքիր ու մոտիվացնող,
- մատչելի և դյուրըմբռնելի,
- հասանելի բոլորին,
- կիրառելի սովորողների կողմից,
- իրատեսական և համապատասխանի ժամանակի պահանջներին:

Լավագույն տարբերակը, որը կարելի էր ընտրել նպատակին հասնելու համար, bookcreator.com ծրագրային հարթակն էր՝ էլեկտրոնային գրքեր ստեղծելու հնարավորությամբ: Հավելվածը մոտիվացնող, խթանող այն միջոցը դարձավ, որը ստիպեց սովորողներին աշխատել

- սիրով,
- սպասումով,
- ինքնուրույն,
- բացահայտումներ անելով,
- սովորել սովորեցնելով,
- միմյանց օգնելով,
- ընթերցելով ոչ միայն իրենց, այլև ընկերների հորինած ստեղծագործությունները:

1.2. Ծրագրային հավելվածի կիրառման նպատակը և ակնկալվող արդյունքները մայրենիի դասերին

ՆՊԱՏԱԿԸ

Զևավորել

- Ժամանակակից տեխնոլոգիաների և զարգացման միտումների վերաբերյալ գիտելիք ու դրա կիրառման հմտություններ
- Ստեղծագործական ու նորարարական մոտեցումներ կիրառելու ունակություններ
- Վստահություն սեփական ուժերի նկատմամբ
- Ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորելու հմտություններ
- Գեղագիտական ճաշակ

- **Կառավարել սեփական ժամանակը**
- **Կիրառել գիտելիքներն ու հմտությունները**
- **Ստեղծել մեդիա արտադրանք սեփական ուժերով**
- **Պահպանել բնությունը**

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- **Տիրապետել** ՏՏ-ի տարրական գիտելիքներին
- **Կիրառել** ստացած ՏՏ-ի գիտելիքը մայրենիի դասերին՝ էլեկտրոնային գրքերի, հրավիրատոմսերի, գործնական աշխատանքների տեսքով
- **Կառավարել** ժամանակը ճիշտ, իսկ աշխատանքը՝ արդյունավետ

1.3. Ծրագրի իրականացման պլան, քայլաշար

Աշխատանքն առանց համակարգվածության նման է բաց ծովում քամուց տարերայնորեն օրորվող նավի:

Քանի որ գաղափարն արդեն կար և նպատակին հասնելու համար ընտրված էր ՏՏ-ի համապատասխան գործիքը, անհրաժեշտ էր ունենալ հատուկ քայլաշար՝ ժամանակը ճիշտ կառավարելու և համակարգված աշխատելու համար:

Գաղափար. մտահղացում էլեկտրոնային գիրք ստեղծել

- ➔ Մտքերի տարափ, ուղեղների գրոհ. թեմաների ընտրություն
- ➔ Հեղինակային առաջին ստեղծագործությունների հորինում ընտրված թեմաներով
- ➔ Ստեղծագործությունների ստուգում, սխալների շտկում
- ➔ Zoom հարթակում պլանավորված առցանց հանդիպումներ
- ➔ Ծանոթացում bookcreator.com հավելվածին
- ➔ Գործիքաշարի ուսումնասիրում, կիրառում
- ➔ Գրքերի կազմերի ընտրություն
- ➔ Էջերի ձևավորում
- ➔ Տեքստերի ինքնուրույն հավաքում

- ➔ Տառաշարի գույնի, տեսքի, չափի, ձևի ընտրություն
- ➔ Նկարների տեղադրում
- ➔ Էջերի ավելացում, կրկնօրինակում, ավելորդ էջերի հեռացում
- ➔ Ձայնային հաղորդագրությունների տեղադրում
- ➔ Էմոջիների տեղադրում
- ➔ Էլեկտրոնային գրքերի տեղադրում տարբեր հարթակներում
- ➔ Էլեկտրոնային գրքերի՝ թղթային տարբերակի ստեղծում
- ➔ Աշխատանքների ընդհանուր քննարկում. սխալների շտկում
- ➔ Սովորել սովորեցնելով
- ➔ Աշխատանքների վերջնական ստուգում
- ➔ Էլեկտրոնային հեղինակային գրքերի պատշաճ ներկայացում
- ➔ ՔԱՅԼԱՇԱՐ

1.4. Սովորողների կողմից ստեղծված հեղինակային էլեկտրոնային գրքերի՝ լավագույն նմուշօրինակների ներկայացում

Սովորողներից ոմանք այնքան էին մոտիվացված և ոգևորված, որ նորանոր «բացահայտում»-ներ էին անում և սովորեցնում իրենց սովորածը ընկերներին:

Շուտով, ըստ ծավալած գործունեության, ձևավորվեց երեք խումբ.

- ❖ ***Ուսուցիչ-սովորողներ*** - խումբ, որի անդամները ոչ միայն սովորում էին, ծրագրային նորանոր «բացահայտում»-ներ անում, այլև՝ օգնում իրենց ընկերներին. սովորեցնում օգտվել ծրագրային հարթակից
- ❖ ***Սովորող-սովորողներ*** - խումբ, որի անդամները սովորում էին ընկերների անմիջական օգնությամբ և աջակցությամբ
- ❖ **Ձեռագիր աշխատանք** - խումբ, որի անդամները գրքերը ստեղծում էին ձեռագիր տարբերակով









ՆՎԵՐ ԴՊՐՈՑԻՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳԻՐՔ, ՓՈՐՁԻ՛Ր ԽՆԱՅԵԼ, ՆԵՐԿԻ՛Ր ԻՆՔԴ ԻՄ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ, ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ, ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԳԻՐՔ ԻՄ ԳԻՐՔԸ, ՍԻՐՈՎ... , ՀԵՏԱՔՐՔԻՐ

1.5. SmartNotebook ծրագրային հարթակի կիրառումը մայրենիի դասերին

Գաղտնիք չէ, որ դասն ավելի մոտիվացնող և ընկալելի է դառնում, երբ այն հարուստ է ինտերակտիվ խաղերով, անիմացիաներով և գույներով: Այսպիսի դասի լայն հնարավորություն է տալիս **SmartNotebook** ծրագրային հարթակը: Սմարթ դասերն առավել հետաքրքիր, տեսանելի և ընկալելի են սովորողների կողմից:

Աա հնչյուն-տառերի ուսուցումն իրականացրել եմ սմարթ դասի միջոցով, որը տպավորիչ էր ու անմոռանալի սովորողների համար: Նրանք դասի անմիջական մասնակիցներն էին, որ տեսնում ու վայելում էին անիմացիաները, գտնում ու շտկում էին սխալները, տեղափոխում ու տեղաշարժում էին նկար-բառերը: Զայնային հետաքրքիր ու անակնկալ լուծումներն առավել խորհրդավոր էին դարձնում առաջադրանքները: Բոլոր սովորողներն ակտիվ մասնակցում էին դասապրոցեսին՝ ողջ դասի ընթացքում կենտրոնացնելով ուշադրությունը: Սովորական գրքային վարժություններն ու հարցերը սմարթ դասի միջոցով դառնում են յուրահատուկ, անակնկալներով լեցուն, գունեղ, որն էլ ուշադրությունը կենտրոնացնելու գրավականն է: Դասարանում ԿԱՊԿ ունեցող սովորողը, ով, մինչ այդ դասը, որևէ բառ չէր արտաբերել, դասի ձևաչափից, գույների բամազանությունից և խաղային հետաքրքիր լուծումներից ոգևորված, առաջին անգամ հստակ և ճիշտ պատասխանեց հարցին՝ արջ:

Սմարթ դասերը հաճախակի կիրառելով մայրենիի դասերին՝ կունենանք մոտիվացված և առարկան սիրող սովորող:

\

Ամեն երեխա կարող է սովորել,
միայն պետք է ընտրել սովորելու՝
նրան հարմար մոտեցումը:

Աստղիկ Բալայան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը մայրենիի դասավանդման մեջ» թեման և կատարելով հետազոտություն՝ եկա այն եզրահանգման, որ

- Սովորողները նյութը սովորում և ավելի լավ են մտապահում ինչ-որ բան կատարելով, որոշակի գործընթացի մասնակցելով,
- Սովորողի համար հնարավորություն է ստեղծվում ոչ միայն անհատական, այլև խմբային աշխատանքի համար,
- Սովորողը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորելու հմտություններ, սոցիալական փոխազդեցության, հաղորդակցական կարողություններ,
- Սովորողը ոչ միայն սովորում է, այլ նաև՝ սովորեցնում, որի հետևանքով ձեռք է բերում վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- Նորագույն տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդների կիրառումը ուսուցման գործընթացում, մասնավորապես գիտելիքների ամրապնդման փուլում, ոչ միայն հիմնավորված է, այլև անհրաժեշտ սովորողների կողմից գիտելիքների արդյունավետ յուրացման, կրտսեր դպրոցականների պատրաստվածության որակի բարձրացման, ուսումնական առարկայի նկատմամբ հետաքրքրություն և մոտիվացիա առաջացնելու նպատակներով,
- Տարրական դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացում կիրառվող նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շնորհիվ ուսուցիչը դառնում է աշակերտի ավագ ընկերը, խորհրդատուն, ում երեխան ընդունում է որպես անառարկելի հեղինակություն ունեցող անձնավորություն, ում հետ կարելի է ազատ ու անկաշկանդ հաղորդակցվել, կիսվել իր «բացահայտումներ»-ով,
- Կիրառելով նորագույն տեխնոլոգիաների և ուսուցման մեթոդների բացահայտման արդյունավետ միջոցներ՝ ապահովվում է սովորողների բազմակողմանի զարգացումը:

Առաջարկություն՝

- Նորագույն տեխնոլոգիաները կամ ընտրված ինտերակտիվ մեթոդները չպետք է շեղեն սովորողին ուսուցանվող թեմայից,
- Ծրագրային հավելվածը կամ մեթոդն ընտրելիս՝ պետք է հաշվի առնել, թե ինչ խնդիր է ուզում լուծել ուսուցիչը՝ այն կիրառելով,
- Ծրագրային հավելվածը կամ մեթոդն ընտրելիս՝ գրական հայերենով ներկայացնելու, հաղորդակցվելու պահանջը պիտի լինի առաջնային,
- Ապահովել շարունակական կիրառությունը նաև հիմնական դպրոցում:

Այսպիսով՝ նորագույն տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդների կիրառման շնորհիվ բարելավվում է ուսուցման որակը. մայրենիի դասերը դառնում են առավել մոտիվացնող, մեծանում է հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, առաջանում է վստահություն սեփական ուժերի նկատմամբ, զարգանում է սովորողների տրամաբանական, ալգորիթմական ու ստեղծագործական մտածողությունը, ձևավորվում է որոնողական աշխատանքներ իրականացնելու կարողությունը, որը երեխաներին դարձնում են ինքնուրույն, նախաձեռնող ու դրանով իսկ նախապատրաստում կյանքի տարբեր իրավիճակներում արագ ու ճիշտ կողմնորոշվելուն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://armedin.am/wp-content/uploads/2019/09/%D4%B1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D4%BB%D5%B6%D5%BF%D5%A5%D6%80%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80.pdf
2. Սուքիասիան Մ., Մանկավարժական տեխնոլոգիաների դերն ուսուցման գործընթացում, Երևան ԵՊՀ հրատարակչություն, 2016
3. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի 2006, 96
4. Սիսյան Ս., Բաբայան Ի., Աղուզումցյան Գ., Բարձրագույն դպրոցի մանկավարժություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 2015թ
5. Կրթության Ազգային Ինստիտուտ Լոռու մասնաճյուղ Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր, 2008թ
6. Էլեկտրոնային գրադարան 4-րդ Բ https://app.bookcreator.com/library/-MEDEObe212nx9qvU5rc https://app.bookcreator.com/library/-MEDEObe212nx9qvU5rc/HmjC9jGl0WdwURwX7zD6NHPPpet2/6KTH7JxmSI6BeBVUI9hbIA/uQCm7euNTpiRt1hXt2Na-Q
7. https://www.youtube.com/watch?v=jl8uSZnow0k&t=25s